պիսկոպոսն փութացեալ է և հակառակ կացեալ է երիցս հրաւիրման և սղարարութեան Անդամոյ վանքական Կառավարութեան, և հուսկ լեռոյ ձեռակալելն զնա սուրհանդակաց Մալր Աթոռոյս՝ լանդգնեալ է նա ի պակաս մատանել և նախայարձակ լեալ, ջանացեալ է բռնցել և ապտակել զսուրհանդակս։ Ուստի ի զեկուցանելն զայսմ ամենայնէ՝ Նորին Վեհափառութիւն լաւել հրամայել Սինոդիս ի ձեռն Վանահօր Խորվիրապու առնուլ ի Բարթուղիմէոս Վարդապետէ զվնդար, զփիլոն և զվարդապետական խաչն ականակուռ ընդ վկայական կոնդակին Հայրապետականի և բերել ալսր ի Սինոդս, (որ և ածեալ եղեւ ի կատար)։

ԳԻՒՏ Ա. ՊԱՀ. ԱՂԱՆԵԱՆՑ

ՋԱՆԱՋԱՆ ԼՈՒՐԵՐ

ՋՂՋՈՒՄՆ

Նոր տարուց առաջ Միացեալ Նահանգների համաժողովի անդամ պ. Բրօունը, Վիսկոնսին Նահանգի պատգամաւորը, մտաւ փոստ իւր անուան թղթակցութիւններ ստանալու համար։ Պ. Բրօունը լրագիրների, նամակների և շնորհաւորական քարտերի հետ միասին ստացաւ մի ապահոված փոքր ծրար, որը ստանալուն պէս իսկոյն բաց արեց, կարծելով թէ դա իրան համակրող ընտրողից կամ ընկերից անակնկալ ընծայ կ'լինի։ Կարող էք երևակալել նորա զարմանքը և սարսափը, երբ ստուարաթղթէ արկղի լատակի վրայ նա տեսաւ խնամքով փաթաթուած արիւնոտ ձեռք։ Զալրացած այդ դարշելի խաղից, նա դէն ձգեց ձեռքը և այն է ուզում էր գնալ լատնել ոստիկանութեան բալց, նկատելով արկղի մէջ մի խուղթ, կարդաց և, ի մեծ զարմանս ներկալ եղողների, զգուշութեամբ վերցրեց զգուանքով դէն ձգած իրը և լարդանքով դրեց դարձեալ ստուարաթղթի փոքրիկ դագաղի մէջ։ Ահա այդ նամակի պարունակութիւնը.

«Թանկագին անդամ վեհաժողովի. եօթը տարի է ինչ ես կռիւ եմ մղում իմ լրագրի մէջ ձեր թեկնածութեան, ձեր քաղաքական կարծիքների և ձեր անձի դէմ. ես ձեր ամենախիստ և ահարկու հակառակորդն եմ եղել շատ չարութիւն եմ արել ձեզ և շատ լանցաւոր եմ ձեր առաջ. ես գործում էի համոզմունքով, երբ ձեր դէմ կազմեցի հակառակորդների մի խումբ. և հպարտանում էի դրանով. երբ համոզուեցի իմ հայեացքների սխալականութեան մէջ, դարձեալ շարունակում էի լարձակուիլ ձեր վերալ արդէն կամակորութեանս և թոլլ բնաւորութեանս պատճառով։ Այդպէս շարունակուեց երեք

տարի, որի պատճառով ես կարմրում եմ։ Այժմ՝ հաչակելով ձեր ճշմարտութիւնը և անկեղծութիւնը, ես կամենում եմ ներողութիւն խնդրել ձեզանից ամենալուզիչ կերպով և իմ ձեր դէմ արած ալդպիսի խիստ մեղքերը քաւել նոյնպիսի խիստ միջոցով, որ ամբողջ աշխարհը իմանալ իմ զղջման և ձեր փառքի մասին։ Ես ստիպեցի վիրաբուժին կտրել իմ աջ ձեռքը և ուղարկում եմ ձեզ իմ անձի ալդ դարշելի մասը, որը այն աստիճան լանցաւոր է եղել ձեր առաջ։ Այն ձեռքը, որը գրել է ալդքան կեղծութիւն և չարութիւն ձեր արժանաւոր և յարգելի անձի դէմ, ալլ ես չի գրի նման բաներ ոչ ոքի մասին. ես տալիս իմ նորան իբրև զոհ ալդ մեղքերի քաւութեան համար և դադարեցնում իմ լրագրի հրատարակութիւնը։ Իմ ալդպիսի կրկնակի զղջման փոխարէն ես խնդրում եմ ձեզ, ինչպէս ողորմութիւն, ձեր ներողամտութիւնը և մի փոքր էլ ձեր բարեկամութիւնը։ (Ստորագրուած է ձախ ձեռքով)

«Բալֆ-Ալլեան Վիլմանս, նախկին խմբագիր-հրատարակիչ «Wisconsins observator»։

«Petit Bleu» Վաշինգտոնի թղթակիցն աւելացնում է, որ պատգամաւոր Բրոուսը կարգադրեց, խեղճ Վիլմանսի ձեռքը դնուսել և զետեղել գեղարուեստական շրջանակի մէջ, որի վերևում ամրացած կլինի վերոյիշեալ նամակը և երկուսը միասին պատգամաւորի ընդունարան-դահլիճի զարդարանքը կը-լինին, ինչպէս ճարտարախօս ապացոյց քաղաքական գործչի քարոզական մակերևոյթի կարպաւորութեան։

Թարգմ. Օր. Ն. Ա.

(Тифл. л.)